



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



193

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ԹԷՈԳՈՐ ՍԱԼՀՈՒՆԻ

Յ91.99

Ա-97

891.99

G-97

26 NOV 1911

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Թ Է Ո Գ Ո Ր Ս Ա Լ Հ Ո Ւ Ն Ի

ԳՐԵՑ

Հ. ՄԻՆԱՍ Վ. ՆՈՒՐԻԻԱՆ

Ի ՄՈՒԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԵՈՅՆ ԳԱԶԱՐՈՒ

1902

ՆԵՐՇՆՁՈՂԻԴ

Թ Ա Տ Ր Ե Ր Գ Ի Ս

ՅՕԳՈՒՑ

ՔՐԻՍՏՈՍԱՍԷՐ ԱԶԳԱՍԷՐ ՀԱՅ ՄԱՆԿՏԻՈՅՆ

ՅԻՇԱՏԱԿԱՒ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

ՀԵՏԵՒՈՂԻԴ ՇԱՒՂԱՅ ՆՈՑԻՆ

ԱԼԻՇԱՆ ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻԴ

ՍԻՐԵՑԵԱԼ ՆԱՀԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ԽԱՆԴԱԿԱԹ ԵՒ ԱՆՁԱՓ Ի ՔԷՆ ՍԻՐԵՑԵԼՈՑ

ՀԱՅ ՄԱՆԿՏԻՆ, ՀԱՐՔ, ՈՒՍՈՒՑԻԶԲ, ՏԵՍՈՒԶՆ

ՄՈՒՐԱՑ-ՌԱՓԱՅԷԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՆՈՒԻՐԵՆ

ՎԵՆԵՏԻԿ 1902 ՓԵՏՐՈՒԱՐ


12 JUL 2013

46.667



63376-67

40.0152



ԹԷՈՂՈՐ ԵՒ ՍՈՒՐԷՆ ՍԵՂԵՄՆՈՒՏԻ ԶՈՐԱԿԻՆ ՄԷՁ

Ա Ջ Դ

Թեոդորի Սաղնուհույ պանծալի և սրտաշարժ վկայաբանութիւնը արդէն աշխարհարար շեզուաւ ընտիր և յոգիչ ոմով գրուած է յԱլիշան Վարդապետի Յուշիկք Հայրենեացի մէջ: Նոյնը Աննան Հեղինակին իրախոշաւօք, հաւարձակեցայ, ըստ ժամանակին թերման, գրարար շեզուաւ քատրերգութեան փոխել Մոշրատ-Ռափայիչ Վարժարանի աշակերտաց հաւար, որ ներկայացուցեցաւ զանազան անգամ:

Այս տարի, Հայոց Ազգի սիրեցեալ Նահապետի մահուան Յիշատակութեան առթիւ ի Վարժարանիս, աշակերտք փափագեցան զայն ներկայացնել աշխարհարար շեզուաւ ի պատիւ Անոր, որ ամենուս սրտին մէջ տպաւորեց Թեոդորի Սաղնուհույ, մանուկ իշխանին, անմոռաց զնայրուը և սերը:

Ինչպէս 1882ի գրաբար տպագրութեան մէջ ըսած եւ,
այս բատրերգը գրուած է տղայոց, աշակերտաց համար,
որով ամէն ջանք եղած է նկատողութեան առնուչ խրեց
հասակը, վիճակը և դերասանական կարողութիւնը: Այս
պատճառաւ ներողամիտ ըլլան որք թէ շատ մը յոգիչ
կրքեր և դժոռարիւն դերեր չգտնեն մէջը:

Այս առիտ իղձ մը ևս յայտնեմ. քանի որ ամէն ազ-
գաց մէջ բատրունն է կրթող գրարքը, ո՛չր էր թէ ի ըյս
գայիւն մեր Ազգիւն մէջ աչ ոչիչ բատրական գրութիւնը,
կրօնականը և բարոյականը, յատկապէս Վարժարանաց
համար:

ԱՆՁԻՆՔ

ԹԵՆՈՂՈՐ *կամ* ԱԹԵՆՈՂՈՐ ՈՐՎԻ ՍՈՒՐԷՆԱՅ ԻՉԽԱՆԻՆ ՍԱՂՆՈՆԿԱՅ:
 ՍՈՒՐԷՆ ԻՉԽԱՆ ՍԱՂՆՈՆ ԿԱՅ, ԹԵՆՈՂՈՐԻ ՀԱՅՐԸ:
 ԱՐՄԱՅԻՍ ԱՂՆՈՒՆԱՎՈՐԻ ՎԱՏԱՆԻ, ԱՂՎԱԿԻՑ և մտերիմ ԹԵՆՈՂՈՐԻ:
 Վ.Ա.ՀՐԱՄ ՍԵՂՈՆՆԻ, մտերիմ ՍՈՒՐԷՆԱՅ:
 Վ.Ա.ՂԱՐՇ Պահապան Սաղնունհայ ամբողջին:
 ՔՐՄԱՊԵՏ
 ԶԻՆՈՒՈՐՔ
 ԴԱՍԻԿ Քահանայ Քրիստոսի, քորոտ ձեռացած:
 ԲՈՐՈՏՔ Քրիստոնեայք:

Տեսարանն է ի Սեղեմնուտ, Սաղնունհայ
 Սուրենաշէն Ոստանին մէջ:

ՀԱՆԴԵՍ Ա.

(ՍԵՂԵՆԱՐԻ ԶՐԸ)

ԲՈՐՈՏՔ ԿԸ ՅԱՌԱՋԵՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ԵՐԳԵԼՈՎ

ՏԵՍԻԼ Ա.

ԴԱՍԻԿ ԵՒ ԲՈՐՈՏՔ

Ստեղծող լուսոյ համասփիւռ լոյս
 Առաւօտեանս լոյս ծաղկուն,
 Այս նախաստեղծ հողոյլ վերայ
 Ծաղէ քու լոյսըլ կենսատու:
 Որ քու լուսով լուսաւորուած
 Ըզբեղ միայն խորհնք, երգենք:

ՈՍՐ ԲՈՐՈՏՆԵՐԼՆ

Ի՞նչ շքեղնկոց անտառիս մէջ:

ԴԱՍԻԿ

Ո՞ւր են արքայք իշխանք հարուստ
 Անմահ զԱստուածըլ պալտելու:

Քու սուրբ անուանչ երկըրպազոչ
Թըշուաւ բորոտըս կանք միայն:

ՈՄՆ

Է Թէոզոր իշխանն ազնիւ
Որ Արմայիւ ընկերոջ հետ
Դէպ ի անտաւս առ մեզ կու դայ:

ԴԱՍԻԿ

Ո՛վ պայազատ Սալհունեաց Տան
Աստուածային շնորհաց անօթ
Արդէն գըխուղ վրայ կը տեսնեմ
Լուսոյ պըսակ վըկայական:

ՈՄՆ

Յամբաբայլ մեզ կը մօտենան:

ԴԱՍԻԿ

Մեկուսանանք մեզմով հեռու
Մինչև ընկերըն զինք թողու:
Ով Տէր երկնից Աստուած բարձրեալ
Ինչո՞ւ այսպէս ծածուկ դադոնի
Քու սուրբ անունըդ պաշտըի: (Գնն)

ՏԵՍԻԼ Բ.

ԹԷՆՈՂՈՐ, ԱՐՄԱՅԻՍ.

ԱՐՄԱՅԻՍ

Բայց ինչո՞ւ քաղքէն հեռու այսպէս մինակ կը թափառիս.
Չէս վախնար որ քու կենացդ յանկարծ հոս մէկը դարանի,
Բաւ է հոս Աթենոզոր, նորէն դստնանք դէպ ի քաղաք:

ԹԷՆՈՂՈՐ

Արմայիւ, աղաչեցի որ զիս այսօր մինակ թողուս
Վախ չունիմ. և ինչ է վախ, բայց կան պատճառք կեանքէ ալ վեր:

ԱՐՄԱՅԻՍ

Չէ՞ս գիտեր որ այս մօտերս զաղիր բորոտք կը բընակին,
Չէ՞ս գարշիր այս տեղերէս ուր օդն իսկ է ապականուած:

ԹԷՆՈՂՈՐ

Աստուած է աշխարհիս Տէր, ինքն ըստեղծեց բոլոր երկիրս
Ձյս լեռներն և այս ձորակն, ինչպէս արևը և լուսին.
Չըկայ տեղ որ ըլլայ պիղծ հանդէպ անոր սուրբ աչքերուն.
Իր հողին կենդանատու, և այս օդոյն իսկ կուտայ կեանք:
Արմայիւ, իրմով կ'ապրինք, իրմով ենք միշտ, առանց իրեն

Իր մը չըկայ, ինքն է աղբիւր միշտ անըստաւ լուսոյ, կեանքի.
Եւ նոյն իսկ այն բորոտները զոր զաղիւր անուանեցիր
Իր ձեռքին ստեղծուածներն են ինծի բեղի յար և նըման:

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛հ նորէն Աթենոլոր քու ցընորքներըդ կը սկըսիս:

ԹԵՂՆՈՐ

Յընորքներ, ով Արմայիս, ճամարտութիւնք են դերագոյն
Եւ իցի՛ւ կարենայիր դու ալ զանոնք լաւ ըմբռնել:
Յերաւել այն օրուընէն որ երկնային լոյսն յիս ծառեց
Այն լուսոյն սուրբ զօրութեամբ ամենայն ինչ տարբեր տեսնեմ.
Չըկայ բնաւ արարած մ'որ ինձ ըլլայ դարչ զըզուելի.
Մանաւանդ զօրոնք աշխարհ՝ կ'արհամարհէ կը նախատէ
Ինձ անոնք դեռ աւելի սուրբ կ'երեւան և սլաշտելի:

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛հ դաւրէ, կ'աղաչեմ քեզ, այդպէս ըսներ միշտ խօսելէ
Կարելի՛ է չըլըզուիլ զաղիւր վերքով բորոտներէ:
Բայց ունինք մըտածելիք, զի երկրորդ պահը կը հընչէ
Պահ՝ մըն ալ, եւ քու հայրդ Սալհունեաց տան զինուորներով
Կը հասնի իւր շինած Սուրէնակերտ սիրուն ոստանն:
Մինչեւ ո՞ւր պիտի երթաս մեր քաջ իշխանն ընդունելու.
Զո՛հին արդեօք պատրաստուեցան:

ԹԵՂՆՈՐ

Այո՛ պատրաստ է ողջակէզն:

ԱՐՄԱՅԻՍ

Արդ զառնանք փութով քաղաք, մեծ է արդէն եղած շարժումն,
Կը տեսնեմ հոսկէ անգամ, ժողովուրդը խումբ խումբ կ'ելլէ
Ընդ առաջ իւր իշխանին՝ որ քաջապանծ մեծ արութեամբ
Տըրդատայ թագաւորէն այնքան պատիւ փառք ըստացաւ:
Երնէ՛կ քեզ Աթենոլոր որ այդպիսի քաջ հայր ունիս,
Քեզ կ'իյնայ ժողովըրդեան զըլուխն անցնիլ չըբեղարար
Եւ բոլոր մեծերուն հետ զինքը բերել մինչև մեհեան.
Ես կ'երթամ տեսնել միայն ժանտ Անակայ Գրիգոր ուրիւն
Որ նոյնպէս հօրը նըման մեր Արքային կ'ուզէր դաւել:
Եւ Արքայն յետ տանջելու ամէն կերպով, զայն յանձնած է
Քու քաջ հօրդ մեր իշխանին տալ իր շարեացն արժանի մահ:

ԹԵՂՆՈՐ

Արմայիս, չըլլայ երբէք այդպէս տըղէտ ինձ դու խօսիս.
Թէ Անակ դաւեց ըստոյդ Խոսրով հըզօր թագաւորին,
Ինչ յանցանք ունի որիւն որ ծառայեց Տըրդատայ քով:
Բայց խընդրեմ թող զիս հոստեղ ու դու փութա՛ դէպի քաղաք
Կան պատահաք որոնք քեզի հիմայ կարող չեմ ըսելու
Բայց հանդարտ ըլլայ թող սիրտդ ե՛ս ալ փութով կուգամ ոստան
Վասն զի առանց ինծի պիտի չըլլայ այս օրուան տօնս:

ԱՐՄԱՅԻՍ

Ու միթէ ունի՞ս դու բան մ' ինծմէ ծածուկ որ չես ըսեր .
Նթէ թողում գրեզ միայն արդեօք մայրդ ինձ չի՞ նեղանար :

ԹԵՈԴՈՐ

Արմայիս կը թախանձեմ, թող զիս միայն յետոյ կուգամ :

ԱՐՄԱՅԻՍ

Կը մեկնիմ բայց կը սպասեմ քաղքին դըռնէն քիչ մը հեռու :
Ո՛վ աստուածք եղէք պաշտպան պայազատի մեր իշխանին :

ՏԵՍԻԼ Գ.

ԹԵՈԴՈՐ (Վայել)

Ո՛հ ո՛րքան դառն է արդարեւ
Առաքինի և անմեղ սիրտն
Այսպէս տեսնել խաւարի մէջ :
Թէ ողջակէզս ինքնայօժար
Ընդունելի է Աստուծոյ
Արիւնս իմ ո՛վ Տէր շնորհատու
Մօրս աղօթից հետ միաբան
Փըրկէ՛ն ըզ՛սպրս ու Արմայիս :

ՏԵՍԻԼ Գ.

ԹԵՈԴՈՐ, ԴԱՍԻԿ, ԲՈՐՈՏԲ

ԴԱՍԻԿ

Թեողորք երանի՛ր քեզ անա կ'տեսնեմ որ սիրտդ արդէն
Կը վառի աստուածային սուրբ կըրակով, ո՛վ մեծ շնորհք,
Ո՛ր չեկած կը յայանըւի իւր ընտրելոց դըլետոյն վըրայ :
Բայց անա եկաւ հասաւ նաև ժամն այն քեզ անձկալի
Յորում դու պէտք է սըրբուխ աւազանին մըկըրտութեամբ,
Անկէ վերջը ճըշմարիտ ֆըրիստոնեայ անուանուելով .
Եւ այդ մեծ սուրբ խորհըդոյն քեզ պաշտօնեայ գիտե՞ս ո՛վ է :

ԹԵՈԴՈՐ

Եւ ո՛վ, հայր,

ԴԱՍԻԿ

Խոստովանողըն՝ ֆրիստոսի Գրիգորիոս
Որ այնքան բազմապատիկ տանջանքներէ ցաւերէ վերջ,
Արտաշատու խոր վերապը կը տարուի մեղքընդու .
Վասընդի իւր սուրբ հաւատքըն պաշտպանեց արիաբար
Եւ գիտցաւ արհամարհել փառք և պատիւ սուտ մեծութիւնք :
Դու հօսկէ գնա՛ արքունիք . հօրըդ կառքին ճիշտ ետեւն
Շըղթայօք բարը կը բերեն ֆրիստոսի բաշ արի վըկայն

79-6-67
63376-67



Եւ յոստան պիտի մընայ մինչև մեկնի դէպ Արտաշատ :
Ամէն բան յարմարցուած է, դու բանտին մէջ մըկըրտուելով
Կ'ընդունիս ըզտուրք շնորհն ես ալ բու բովը պիտի ըլլամ :

ԹԵՈԴՈՐ

Բայց ի՞նչպէս կարելի է բանտին դռներն բանալ անցնիլ,
Պահապանք մեծ խըստութեամբ անշուշտ հոնտեղ պիտի հըսկեն :

ԴԱՍԻԿ

Երբ քու հայրը մըսանէ յոստան՝ դու ալ անոր զընա՛նդ առաջ
Բայց հրբ ամենքը դիմեն դէպ ի տաճարը զոհելու
Դու վազէ դէպ ի մութ բանան հոն պահապանք քեզ կը բանան .
Վասըն զի մայրը սըրբասուն դազա ամէն ինչ հոգացած է :

ԹԵՈԴՈՐ

Ո՛վ մայր իմ պաշտելի մայր, պատկեր սիրոյ և սըրբութեան
Դու պատճառ կըրկին կենացս ահա որդիդ թէոզորոս
Կը զոհէ իւր մարմինն հոգւով քեզ հետ միշտ ապրելու :

ՈՄՆ ԲՈՐՈՑ

Ժողովուրդն ամէն կողմէ երազաբար դուրս կը դիմէ :

ԱՅԼ ՈՄՆ

Արմայիս նաև ընկերը դէպ ի այս տեղ կուզայ կարծես :

ԴԱՍԻԿ

Տէր ընդ քեզ, ո՛վ թէոզոր, մենք հեռանանք փութով հոսկէ :

ՏԵՍԻԼ Ե .

ԹԵՈԴՈՐ, ԱՐՄԱՅԻՍ

ԱՐՄԱՅԻՍ

Շատ ատեն քեզ սպասեցի և հարկ եղաւ Աթենոզոր
Որ հոս դամ իմացնելու որ կը թընդայ Սուրէնաշէն :
Խուռներամ բոլոր ամբոխն իւր իշխանին նը առաջ կ'երթայ
Կը ըսե՛ս փողերուն ձայնն . ինչո՞ւ այդպէս կը մըտածես
Ո՛ն երթանք հասնինք փութով արդէն մօտէն կ'անցնին անոնք :

ԹԵՈԴՈՐ

Մի վայրկեան՝ մինչև անցնին ապա մենք ալ կը միանանք :

ՏԵՍԻԼ Զ .

ԹԵՈԴՈՐ, ԱՐՄԱՅԻՍ, (Իւ լուսնի փոխին)

ՓՈՂՔ ԵՒ ԵՐԳՔ

Ո՛վ ժողովուրդք երգեցէք
Մեր քաջ արբայն ըզՏըրդատ,
Հա՛պա դաւկունք թորդոմայ
Հընչեցուցէք ձեր փողեր :
Հոռոմք և Յոյնք թո՛ղ դովեն

Հըռչէ Պարսիկը թո՛ղ սարսին,
 Հայք թող երգեն պանծալով
 Մեր քաջ արքայն ըզՏըրլատ:

ԹԵՈՂՈՐ

Դիմիմ օ՛ն և ևս
 Սըրբոց ասպարէզ
 Սերոյ սուրբ սեղանն
 Ըլլալ ողջակէզ:
 Վայելը երկրաւորք
 Բոլոր անցաւոր
 Ի դուր կը ջանաք
 Խաբել իմ սըրտիկս:
 Փռլթով երկնային
 Զէնքերով վառուած
 Հայրենի սիրոյն
 Հեռ պէտք է մըրցիմ.
 Օ՛ն ելլեմ և ևս
 Սըրբոց ասպարէզ,
 Ու Փըրկչին Սերոյն
 Ըլլամ ողջակէզ:

Վ Ե Ր Զ

Ա • Հ Ա Ն Գ Ի Ս Ի

ՀԱՆԳԷՍ Բ

ՏԵՍԻԼ Ա (Գ--ԷԲ)

ՍՈՒՐԵՆ, ՎԱՀՐԱՄ, ՔՐՄԱՊԵՏՆ, ՎԱՂԱՐՇ, ԶԻՆՈՒՈՐՔ

ԶԻՆՈՒՈՐՔ (Էրգչւ Դրանին)

Ո՛վ ժողովուրդք երգեցէք
 Մեր քաջ արքայն ըզՏըրլատ,
 Հա՛պա զաւկունք թորգոմայ
 Հընչեցուցէք ձեր փողեր,
 Հոռոմք և Յոյնք թո՛ղ դովեն
 Հըռչէ, Պարսիկը թո՛ղ սարսին ||
 Հայք թող երգեն պանծալով
 Մեր քաջ արքայն ըզՏըրլատ:

ՔՐՄԱՊԵՏ

Քաջ իշխան առաջ եկո՛ւր, նաև դուք քաջըրէ Սալհունեաց
 Անաստայ խնամակալ մօր բազնոյն վըրայ եկէք երգնուլ
 Տըրլատայ մեր արքային ցըկեանս ըլլալ հաւատարիմ:

ԱՄԵՆՔԸ ՄԵԿՏԵՂ

Անահիտ մայր Հայաստանեայց,
Արփիական բազնիդ վըրայ
Կ'երդնունք Տըրդատ մեր արքային
Հաւատարիմ ըլլալ ցըմահ:
Շանթ և կըրակ ջընջին սըրքեն
Անոր դաւող թըշնամիներ,
Ամթահար թո՛ղ կորընչին
Եւ Սասանեանք և վատ մատնիչք:

ՔՐՄԱՊԵՏՆ

Մահ սըտողին Անահիտայ մօր սեղանոյն վըրայ տուած երգման:

ՍՈՒՐԵՆ

Բայց ո՛ւր է Աթենուոր իմ մէկհատիկ սիրուն դաւակո
Պալատանս դըրանը քով զիս համբուրեց, ա՛լ չըտեսայ:

ՔՐՄԱՊԵՏՆ

Աըքային երբ երդուընցանք զո՛հի ժամուն հոս չէր ուրեմն:

ՍՈՒՐԵՆ

Չեմ կարող ըմբըռնել ես թէ ո՛ւր արդեօք անհետացաւ.
Կարծես թէ տըխուր էր նա թերևս հիւանդ էր իմ որդիս.
Դու Վաղարշ գընա փուծով և իրեն հոս առաջնորդէ:

ՔՐՄԱՊԵՏՆ

Յետ երդման և զո՛հերուն, Սուրէն, բոլոր աւագորեարս
Կը սպասէ լըսել անձկով մեր արքային հըրամաններն:

ՍՈՒՐԵՆ

Դուք իշխանք և քաջ սեպուհք Սալհունեաց տան յաղթող զինուորք
Լըսեցէք ի՛նչ որ Տըրդատ մեր մեծ արքայն կը հրամայէ:
Թէ երբէք ձեր հողի վըրայ կը գըտնըւին այն ժանտ ցեղէն
Հետևողք Քրիստոս անուամբ խաչը հանուած աւաղակին
Յորոց էր և չար ծընունդ դըժխեմ Անակըն տիրադրուծ,
Նոյնհետայն ծանուցէք դուք որ արժանի կըրէ պատիծ.
Անակայ ինչպէս որդին զոր շըղթայիւք հետըս ըբրի
Որ նետուի Արտաշատու օձերու խոր վերապին մէջ:
Վասըն զի մեր աշխարհին այսքան չարեաց է՝ արիննիրուն
Անօրէնքդ եղան սլատահաւ. իրենք զխոտրով յաղթող արքայն
Դաւեցին և սպաննեցին. արժանապէս թո՛ղ պատժըին:
Միանգամայն արքայն Տըրդատ կ'իջացընէ նախարարաց
Որ ամենքն ի զէն կոչեն բոլոր իրենց հաւատարի՛ք
Եւ հրակեն հայ հայրենեաց ամէն աւեր սահմաններուն:

ՔՐՄԱՊԵՏՆ

Համօրէն Աստուածք վըրայ, որ բովանդակ Սալհունի Տունն
Սըրով հրով պիտի ջընջէ այդ քրիստոնեայ կոչուած ժանտ ցեղն:

ՍՈՒՐԷՆ

Հոս կ'երդնում իմ միածին պայազատիս դըլխոյն վըրայ
Արքային պահել հրամանն և տալ պահել Սալհունեաց Տան.
Բայց ահա Աթենոլոր...

ՏԵՍԻԼ Բ

ԱՌԱՋԻՆՔՆ ԵՒ ԹԵՂՂՈՐ

ՍՈՒՐԷՆ

Որդեակ սիրուն ո՞ւր էիր դու

Քիչ առաջ:

ՔՐՄԱՊԵՏՆ

Եւ երբոր հոս կատարուեցան երկմունք և զո՞ք ..

ԹԵՂՂՈՐ

Յոստանին նըստած, Հայրիկ, քեզ անհամբեր կը սպասէի:

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ զաւակ, միակ իմ յոյս, կեանքէս աւել յոյժ սիրելի
Չիմացա՞ր որ այս ժամուս ամէնքըս հոս սուրբ զոհերով
Աստուծոյ և արքային հաւատարիմ ըլլալ երդուանք:

ԹԵՂՂՈՐ

Նոյնպէս ես երդում տըլի հաւատարիմ մնալ Աստուծոյ
Եւ հողիս բոլորովին նըւիրեցի իւր սըրբութեան:

ՍՈՒՐԷՆ

Եւ ո՞ւր այդ որդեակ սիրուն. արդեօք էի՞ր տաճարիս մէջ:

ԹԵՂՂՈՐ

Ուր Տէր է՛ այն է տաճար թէ և ըլլայ բանտ խաւարին:

ՍՈՒՐԷՆ

Որդեակ խօսքդ չեմ ըմբըռներ. ինչո՞ւ այդպէս տըխուր ես դու:

ՔՐՄԱՊԵՏ

Անահոյս բազնին վըրայ եկուր երդնուլ Աթենոզոր
Չի դուն ես միակ ժառանգ և պայազատ Սալհունեաց Տան:

ԹԵՂՂՈՐ

Չեմ կարող կըրկին երդնուլ, իմ աստ մընալս չէ և ձեզ լաւ:
Ո՛վ հայր իմ, խընդրեմ քեզմէ տուր ինձ հրաման երթամ ի բաց:

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ միակ ազնիւ որդիս, ի՞նչ ունիս դու ըսէ՛ խընդրեմ
Ողջունէ այս սուրբ բազինն ապա դընա՞ տունն հանգչելու:

ԹԻՆՊՈՐ

Անհրնար է ինձ հայր իմ այդ աստուածներն ողջունել
Ա՛հ խընդրեմ, թողէք երթամ. ապա թէ ոչ բանաւ տարէք:

ՍՈՒՐԷՆ

Այդ ինչ խօսք Աթենոզոր, չըթունքէ ինչե՛ր ըսին հիմակ:

ԹԻՆՊՈՐ

Որ այդ սուտ աստուածներուն ես չեմ կըրնար երկըրպագել:

ՍՈՒՐԷՆ

Չուտական խելքըդ թըռա՞ւ. դուն ըսածներըդ կ'ըմբըռնե՞ս:

ԹԻՆՊՈՐ

Թերևս այդ սուտ աստուածներն ինձի այդպէս խօսիլ կուտան:

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ տըղայ ...

ՔՐՄԱՊԵՏՆ

Ա՛յ ա՞բարիշտ ...

ՍՈՒՐԷՆ

Միտքըդ է՞նչ է:

ԹԻՆՊՈՐ

Քրիստոնեայ եմ
(Կ'է՞նայ Անհրայ իստիս -- ի՞նչ էր իստիս--)

ՍՈՒՐԷՆ

Քրիստոնեայ ...

ՔՐՄԱՊԵՏՆ

Կախարչ է դա ամենքնիս ալ փախչինք հոսէ (ե չ-իւն):

ՏԵՍԻԼ Գ.

ՍՈՒՐԷՆ, ԹԻՆՊՈՐ

ԹԻՆՊՈՐ

Քրիստոնեայ եմ ճըշմարտիւ պաշտեմ Միայն Երկնից Աստուածն
Եւ ոչ այդ սուտ կուռքերն որոնք ինկան կըտոր փըրդուչ:

ՍՈՒՐԷՆ

Լ՞ուր կեցիր, անմիտ դաւակ, ուսկի՞ց ատոնք դուն սորվեցար.
Քրիստոնեայ, իմ արեան մէջ երբէք չըկայ այդ պըղծութիւն.
Գիտե՞ս դուն Աթենոզոր այդ քրիստոնեայդ ի՞նչ ըսել է՝
Թըշնամի աստուածներուն, թագաւորիդ և ինձ քու հօրդ:

ԹԵՈՂՈՐ

Թըջնամի սուտ աստուածոց, հաւատարիմ թաղաւորի
Հայր սիրող, բայց հօրմէ վեր պաշտող զԱստուածըն ճըշարիտ:

ՍՈՒՐԷՆ

Դու ինձի՞ կ'ուսուցանես ո՞վ չուսուական անմիտ զաւակ
Ձեռ որդիս թէ որ իսկոյն հոս չըզոհես զից և՛ Անահայ:

ԹԵՈՂՈՐ

Ձո՞հ կ'ուզես, հայր իմ ահա կ'ըլլամ սիրով ես ողջակէզ:

ՍՈՒՐԷՆ

Գնա՛ կորիւր անմիտ տըզայ:

ԹԵՈՂՈՐ

Ներէ՛ ով հայր քրիստոնեայ եմ:

ՏԵՍԻԼ Դ

ՍՈՒՐԷՆ (Գաշնակ)

Ահաւոր... ո՞վ անմահ զիք քրիստոնեայ ո՞վ... միակ որդիս
Աւքիս լոյսն, սըրտիս հատորն իշխանութեանըս պայազատն:
Ո՞վ չար օր, ուստի՞ արդեօք ծընար դու ինձ. օր ահաւոր

Կը զողամ բոլոր մարմնովս. զիս բարկութիւնըս կը սպաննէ:
Յետ երկար աշխատանքաց երբ խընդութեամբ հոս դիմեցի
Քիչ մ' հանգիստ վայելելու իմ զաւակիս անոր մօր բով,
Հայրենի իշխանութեան և հայրենի սահմանաց մէջ,
Ի՞նչ ասող էր չարաքաստիկ. ի՞նչ անէճք էր զըլխուս եկաւ.
Ո՞վ երկինք, ով օդք, աստեղք, լըսեցիք դուք ո՞վ մեծ աստուածք
Սուրենայ Տեառն Սալհունեաց միակ որդին է քրիստոնեայ...
Օ՛ն և օ՛ն կ'երզնում ես հոս որ թէ պընդէ յամաութեամբ
Այս սուրբ իւր կողից մէջ հայրն իւր ձեռամբ պիտի յըլտէ
Այո՛ ես... Այո՛ ես հայրս, ես այս զաշոյնն... ո՞հ ի՞նչ կ'ըլլամ...
Իրեցն է վրէժ... խաւար աշքերըս կը պատէ... ո՞ւր եմ... փախչիմ...

ՏԵՍԻԼ Ե

ՍՈՒՐԷՆ, ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ

Ո՞վ Սուրեն... քիչ մը կեցիր քաղաքն ամբողջ յուզման մէջ
Կը պատմեն զարհուրանօք որդւոյր զասուածս արհամարհելն:
Ե՛լ փութով և տեսնըէ, կան որ կ'ուզեն հոս յարձակիլ
Եւ իրենց նիղակներով աստուածներուն վըրէմն առնուլ:

ՍՈՒՐԷՆ

Ո՞հ Վահրամ եթէ լըսես թո՛ղ ականջներըդ չընդունին
Որ Սուրեն Սալհունեաց Տէրն որդի մ'ունի քըրիստոնեայ:

ՎԱՀՐԱՄ

Չեմ հաւատար, բըննեցի՞ր դու:

ՍՈՒՐԵՆ

Ո՛հ ո՛ւր էր թէ ստոյգ չըլլար
Ո՛վ վահրամ աշխարհս բոլոր էնձի նըւէր կը շընորհուէր:

ՎԱՀՐԱՄ

Հաւատալ ես չեմ կըրնար այդ հասակի տըղու խօսքին.
Ո՛վ գիտէ ո՞ւսկից սորված կ'արտասանէ առանց խոկման.
Կարելի է չեմ ըմբռններ որ այդ անմեղ սիրուն զաւակդ
Ըլլայ այն բրիտոնեայ և ամբարիշտ չար ցեղէն:

ՍՈՒՐԵՆ

Իսկ թէ որ բըննեք մէկտեղ և ստուգապէս այնպէս զըտնենք,
Ո՛վ վահրամ է՞նչ կ'իյնայ էնձ...

ՎԱՀՐԱՄ

Ո՛հ ծանր է ծանր բերնէս հանել:

ՍՈՒՐԵՆ (յառաջադասութիւնով)

Սիրուն զաւակի մ'ի՞նձ լոյս եկաւ
Աթենոզոր զըրի անուն

Իմ նաղելի փափուկ հարսիս
Էր նա ծընունդըն մէկհատիկ:
Խելացի միշտ և գեղեցիկ,
Պարծանք իւր հօրն և խընդութիւն.
Իշխանք և մարք բընքուշ բամբջանց
Կը մըրցէին նորա սիրուն.
Եւ հիմայ է՞ ինձ կարելի
Այնպէս զաւակի ըլլալ գահի՞՛ճ
Ինչ Աղուիթա իմ աղաւնի,
Ո՛հ ինչ եղաւ մեր սրբեկին:

ՎԱՀՐԱՄ

Ո՛վ գիբ մարկանց սըրտին իշխողք
Դուք օգնեցէք զըմբաղդ մի հօր
Ողորմեցէք Սալհունեայ Տան
Պահպանեցէք անոր ժառանգն.
Թէ որ լըսէ արքայն Տըրդաս
Հըրով սըրով պիտի դատի:

ՍՈՒՐԵՆ

Սակայն ինչո՞ւ այսպէս վաս գութ
Ո՞ւր գընաց սիրան իմ կորովի.
Մէկդի ըլլայ սէրն հայրական
Ի՛նչ անմահ աստուածք ապրին միայն:

ՎԱՀՐԱՄ

Աթենոզոր հոստեղ կանչէ՛ :

ՍՈՒՐԷՆ

Կամ կ'ուրանայ այն պիղծ աղանդն ...

ՎԱՀՐԱՄ

Ամեն տանջանք ըսպառնացիր :

ՍՈՒՐԷՆ

Կամ աստուածոց թող երթայ զո՛հ :

ՏԵՍԻԼ Զ

ՍՈՒՐԷՆ, ՎԱՀՐԱՄ, ՎԱՂԱՐՇ

ՎԱՂԱՐՇ

Քաջարանց էջխան Սուրեն, ամբոխն ըզբեզ կ'ուզէ տեսնել :

ՍՈՒՐԷՆ

Բայց Վաղարշ, ըսէ՛ փութով, արշեօք ո՞ւր դնաց Աթենոզոր

ՎԱՂԱՐՇ

Քիչ մ'առաջ ելաւ ասկէ կարծեմ դէպ ի քաղաքին դուռն :

ՍՈՒՐԷՆ

Գիտե՞ս դուռն, ունի՞ ընկեր, ո՞վ են անոր խորհրդատուք :
Որո՞ւն հետ կը տեսնուի և կամ ո՞ւր տեղ կը յաճախէ :

ՎԱՂԱՐՇ

Մօրմէն զատ չունի ընկեր և երբեմն ալ հասակակից
Պատանին Արամայիս ում հետ կ'երթայ պըստեխու :

ՍՈՒՐԷՆ

Գիտեմ ես ինչո՞ւ ամբոխն յուզուած է այդքան սաստիկ :
Բայց նախ հարկ է որ երթամ Աթենոզորը փընտռելու :
Ու բերեմ կամ կենդանի և կամ դիակ զո՛հ աստուածոց :

ՏԵՍԻԼ Է. (ԱՆՊՈՐ)

ԴԱՍԻԿ. ԲՈՐՈՏՔ. ԹԷՆՊՈՐ

ԴԱՍԻԿ

Ե՛կ իմ դիրկս, որդեակ սիրուն, աւազանին մաքրեալ հոգի
Դու ձորակըս լուսցուցիր, քեզմով խայտան մեր ոգիներն
Եւ քեզմով խորտակեցան սուտ աստուածներն կոյր ամբոխին :

Ո՛վ հըրաշք երախայրեր շընորհալից մըկըբտութեան:
 Զօրացիք Փըհչին սիրով, զի քեզի դէմ դառն կըտիւ
 Պատրաստած է սատանան և ես արչէն իսկ կը տեսնեմ
 Սուրբ պըսակ մարտիրոսի լուսաճաճանչ գըլխուշ վըրայ:

ՊԱՐՆ ԲՈՐՈՏՆԵՐՈՒ

Ի՛նչ է արիւնս այս ծիրանի
 Թափուած գետին ծաղկանց վըրայ.
 Ի՛նչ է այս լոյսն արփիազեղ
 Որ կը պատէ զերկնից կամար:

ԹԵՈԴՈՐ

Ո՛վ Տէր, ո՛վ սուրբք և հրեշտակներ
 Ինձ աըկարիս ո՛չ օգնեցէք.
 Լուսափետուր ձեր թևերով
 Կարենամ վեր թըռչիլ երկինք:

ՊԱՐՆ

Ի՛նչ է արիւնս այս ծիրանի
 Թափուած գետին ծաղկանց վըրայ,
 Ի՛նչ է այս լոյսն արփիազեղ
 Որ կը պատէ զերկնից կամար:

ԳԱՍԻԿ

Ո՛վ սուրբ զինուորք Քրիստոսի, կարծես ճամբորդք դէպ չոս կուգան,

Հանդարտիկ քաշուինք ի ձորս, ով Թէոդոր, դու ալ եկուր,
 Միաբան ըսփոփուելու, աստուածային գրոց ընթերցմամբ:

ՏԵՍԻԼ Ը.

ԱՐՄԱՅԻՍ (ՎՅԾ)

Ո՛ւր կ'երթան, արդեօք ի՛նչ էր այս ամենայն. երձո՞ք արդեօք.
 Ո՛վ էր այն վեհ ծերունին որ իւր խօսքով տարաւ դամէնն:
 Զըւայ թէ ատոնք ըլլան քաղքէս մերժուած պիղծ բորոտներն
 Եւ ի՛նչպէս Աթենոքոր ատոնց հետ մէկ կը կենակցի.
 Ի՛նչ երգ էր գեղեցկաձայն. կ'ուզեմ վազել և իմանալ:

ՏԵՍԻԼ Թ.

ՍՈՒՐԷՆ ԵՒ ԶԻՆՈՒՈՐՔ ԵՐԿՈՒ

ՍՈՒՐԷՆ

Ի զո՛ւր ձեռքես կը փախչիս ա՛յ ապըստամբ, չար սէերես,
 Զօրականք անկէ անցէք. տեսէք ինքն ալ ի՛նչպէս վազէ:
 Թըշուա՛ն հայր, ի՛նչ երազներ ի՛նչ մեծ յոյսեր շընջընեցան.
 Ո՛վ զաւակ ապաշընորհ, երբոր քու հայրու ոգի ի բոին
 Ամէն հնարք ամէն միջոց ի գործ դըրաւ յաշողեցաւ
 Արքունեաց խընամութեան օր մը պատուոյն գրեղ հանելու

Եւ այնպէս բարձրացընել Սալհունեաց Տունն և Սուրենայ
Դու ոճիւր կը մըտածես աստուածոց դէմ ու արքայիդ :
Ահա զինք բըռնած բերին և ոչ կ'ուզեմ նայել երեսն :

ՋԻՆՈՒՈՐ

Արմայիսն էր փախչողն, Աթենոպոր հոն չըտեսանք :

ՍՈՒՐԷՆ

Արմայիս՝ միայն էիւր, արդեօք տեսա՞ր զԱթենոպոր :

ԱՐՄԱՅԻՍ

Չինքն եկայ փընտոռելու, բայց տակաւին չհանգիպեցայ :

ՍՈՒՐԷՆ

Ինչո՞ւ հոս կը փընտոռես. միթէ դուն ալ համախո՞հ ես
Չար գործոց զորոնք ինձի Աթենոպոր ըսաւ բերնով :

ԱՐՄԱՅԻՍ

Չէ հընար որ բու զաւակդ չար ոճիրներ երբէք խորհի :

ՍՈՒՐԷՆ

Ուրեմն ես սո՞ւտ կը խօսիմ, ըզդոյչ լեզուիլ ո՛վ պատանի :

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ էշխան ըզդոյչ եւ դու, կերբերն ըզբեզ չկուրացնեն :

ՍՈՒՐԷՆ

Պատանի՛ ի՛նչ լիբբ խօսք էր, օ՛ն զօրականք կապեցէր զայլ :

ՏԵՍԻԼ Ժ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԹԵՈԴՈՐ

ԹԵՈԴՈՐ

Ո՛վ զինուորք, ի՛նչ կ'ընէր դուք, ո՛չ հայր իմ չէ՛ նա յանցաւոր :

ՍՈՒՐԷՆ

Դու զաւակ ապաշընորհ, չե՞ս ամըչնար զիս հայր կոչել :

ԹԵՈԴՈՐ

Մենչև ցմահ մինչև արեանս յետին կաթիլ, յետին հազադ
Դու ո՛վ հայր իմ սիրելի և պաշտելի հայրեկա ես միշտ :

ՍՈՒՐԷՆ

Կը սըտես. ուրեմն ինչո՞ւ այս դառն ժամեր տըւիլ ինձի
Դու հօր մը սիրաը զիտե՞ս որ շատ վեր է որդւոյ սըրտէն :

ԹԵՈԴՈՐ

Կը զգամ զայն և թէ երբէք զայն ցաւցուցի խընդրեմ ներէ՛ :

ՍՈՒՐԷՆ

Ներքե՛լ քեզ... ըսէ՛ ինչո՞ւ հիմայ դուն հոս կը գտնուիս:

ԹԵՆԳՈՐ

Լըսեցի որ այս ժամուս թաղաւորին հըրամանաւ
Այս համբէն պիտի տարուէր դէ՛պ ի վերապէն Արտաշատու
Աստուծոյ ծառայն Գրեգոր...

ՍՈՒՐԷՆ

Ուրիմն անո՞ր համար եկար.

Ներքե՛լ քեզ... Դու ի՞նչ ունիս այն չար ծընունչ Գրեգորի հետ:

ԹԵՆԳՈՐ

Հա՛յր կ'ըսեմ՝ քրիստոնեայ եմ:

ՍՈՒՐԷՆ

Ա՛լ լըցաւ չափը չարութեանդ

Փութով քեզ կը ցուցընեմ թէ ի՞նչ ըսել է քրիստոնեայ: (Իբ + լե
իւ Դ-Ե):

Վ Ե Ր Զ

Բ. Հ Ա Ն Գ Ի Ս Ի Ն

Հ Ա Ն Գ Ի Ս Գ .

ՏԵՍԻԼ Ա . (Բ-Ն-Դ)

ԹԵՆԳՈՐ (Վ-Ե-Զ-Է)

Ո՛ւր գըտնուիմ, չընայխարհիկ այն տեսիլքն ի՞նչ էր արդեօք
Որ մարմնոյս ոսկերաց մէջ աստուածային շընչեց մեծ ոյժ .
Կարծէի թէ երկինքն եմ և կամ մըթին բանտերու մէջ .
Ո՛ւր թըռան իմ բոլորտիքս թեւապարող լուսաւորներն:
Ո՛հ երազ էին արդեօք, բայց ո՛չ զի դեռ կարծես լըսեմ
Անոնց ձայնքն, անոնց երգերն, որոնցմով սիրտս քաջալերուած,
Կը մոռնար այս կապանքներն զորքս գըրակ հայր մը ձեռքիս .
Եւ սակայն ո՛րքան ալ ծանր, որքան ըլլան տաժանելիք
Թեթեւ են և ցանկալիք զի կը կըրեմ Փըրկչիս համար:

ՏԵՍԻԼ Բ.

ՎԱՂԱՐՇ, ԹԷՆՈՂՈՐ

ՎԱՂԱՐՇ

Կուգամ հոս Աթենոլոր դաղտ ի հօրէդ՝ մօրըդ կամօք
իմացնել որ մըտերիմը Արմայիս առ քեզ կուգայ:

ԹԷՆՈՂՈՐ

Թէ Վաղարշ չի վախնար նա, այս խաւարէս, չըզթաներէս
Մէշտ սիրով կ'ուզեմ տեսնել զիմ սիրելի Արմայիս: (Վաղարշ կ'երևայ):

ՏԵՍԻԼ Գ.

ԹԷՆՈՂՈՐ (ԳԵՅ)

Ո՛վ Աստուած զքեզ կ'աղաչեմ, լուսաւորէ և անոր միտքն
Ընդունել մըկըրտութեամբ ըստ սուրբ շնորհքդ սըրբացընող:

ՏԵՍԻԼ Դ

ԹԷՆՈՂՈՐ, ԱՐՄԱՅԻՍ

ԱՐՄԱՅԻՍ

Ի՛նչ տեսնեմ Աթենոզոր, այս ինչ տեսիլ ինձ ահաւոր
Դու միակ իմ մըտերիմն երկաթներով ընծանաւորուած:

ԹԷՆՈՂՈՐ

Գերազայն իմ ժամերս ինչո՞ւ խոտվես ո՛վ Արմայիս
Յորս միայն կըրնամ հանդարտ սըրտով խօսիլ Աստուծոյս հետ
Ինչո՞ւ բանտն անգամ կուգաս ով սիրելիդ իմ բարեկամ,
Տեսնելու եղեանագործ և ամպարիշտ քրիստոնեայն:

ԱՐՄԱՅԻՍ

Ա՛յլ էն ըստ առ իս խօսքերդ. կարելի՞ է այդպիսի ըան:

ԹԷՆՈՂՈՐ

Քրիստոնեայք թէ ամենքն ալ չար արարածք են յաշխարհի
Ինչո՞ւ դու անոնց թըւէն կ'ուզես հանել ըզթեոզոր:

ԱՐՄԱՅԻՍ

Զի ըստ վրադ բայց այն մոլար պիղծ կրօնքէն չըկայ ինչ պիղծ:

ԹԵՈՂՈՐ

Իսկ ըու վրայ ո՛վ Արմայիս, այն է միայն որ կը պահուի:

ԱՐՄԱՅԻՍ

Թող ատոնք, Ալմենդոր, ժամ է լրջին մըտածելու
Եղածներն գիտէ քաղաքն և կը սպասէ վրէժխնդրութեան
Հայրըէ մահ երչուընցած է, թէ չուրանաս այն պիղծ աղանդն:

ԹԵՈՂՈՐ

Եւ ի՞նչ վառք թէ կարենամ այդ երջանիկ մահուան հասնիլ:

ԱՐՄԱՅԻՍ

Գըժբաղդ հօր մը կըսկիծներն ընսա ուրեմն հողըդ չէ՞
Չե՞ս ըզգար որդեկորոյս մօր մը աղի արցունքներն.
Կը ձըզե՞ս ըու մըտերիմ ընկերոջ սերն ու թախանձանք
Ատոնցմէ վե՞ր կը դասես աներևոյթ սուտ ոգիներ:

ԹԵՈՂՈՐ

Ամենէն վեր կը դասեմ այո՛ զԱստուածն իմ ճըշմարիտ:

ԱՐՄԱՅԻՍ

Կարելի՞ է որ ըլլայ այդպէս Աստուած մը չար անզուլթ
Զուարճացող հօր մօր շացին, անոնց դառն ցաւոց վըրայ:

ԹԵՈՂՈՐ

Ի՞նչ է կեանք ի՞նչ է արիւն, ի՞նչ են արցունք և կամ վայելք
Աստուծոյ մեզի տըւած անվերջ անձայր բարեացը բով:

ԱՐՄԱՅԻՍ

Ուրեմն դու կ'ուրախանա՞ս և կը տենչաս մեր արտասուաց:

ԹԵՈՂՈՐ

Լացն այո՛ կ'արհամարհեմ և կը վընտուեմ երկընքի լոյսն:

ԱՐՄԱՅԻՍ

Այդ Աստուածդ ատելութիւն կը պատուիրէ և ոչ թէ սէր:

ԹԵՈՂՈՐ

Ինքն է սէր գերազոյն, ի՞նչպէս ատել սորվեցընէ:

ԱՐՄԱՅԻՍ

Քեզի ի՞նչ այդ երազներն. վայլէ՛ աշխարհ հարըստութիւն:

ԹԵՈՂՈՐ

Որոնք վաղ կամ անաղան ըտիպուած ես դու ալ թողու:

ԱՐՄԱՅԻՍ

Գէթ հօրը դիմաց կեղծէ դո՞նէ աստուածներուն առ երեսս:

ԹԵՈՂՈՐ

Չկայ ծածուկ Տիրոջ համար, ամեն տեղ է ու կը տեսնէ.
Ո՛վ սըրտով զինքը պաշտէ, պէտք է բերնով խոստովանի:

ԱՐՄԱՅԻՍ

Թէ կ'ուզես կեանքիդ խնայել քու սիրելիացըդ մեզ համար
Այն ատեն փախի՛ր զընա՛, օտար աշխարհ ու անծանօթ.
Հեռաւոր մեզմէ մարմնով բայց ի՛նչ մեռնի՛ր Աթենոյոր:

ԹԵՈՂՈՐ

Կը լըսեմ զըրաներու ձայն, փոյթ լըմընց՛ւր ո՛վ Արմայիս.
Կը լըսեմ և հօրըս ձայն, անշուշտ կուգայ վերջին փորձի.
Եւ սակայն կը սիրեմ հայրս բաց ի հոգւոյն կուրուցիւնէն
Կը տենչամ որ իւր ձեռքէն թըռչիմ երկինք զո՛հ Աստուծոյս
Բարեխօս իրեն և քեզ որ ընդունիք երկնային լոյս:

ԱՐՄԱՅԻՍ

Ես բանտէս չեմ հեռանար կ'ուզեմ մեռնիլ հօս քեզի հետ:

ԹԵՈՂՈՐ

Թէ Փրկչես սիրոյն համար, ի՛նչ աւելի կայ ցանկալի
Իսկ թէ ոչ՝ զնա՛ Արմայիս, կը թախանձիմ զընա՛ հոսկէ
Բայց նորէն կը տեսնես զիս ասկէ փառօք և լուսաւոր.
Լոյս որ քեզ պիտի ցոլայ և միաբան պիտի ցընծանք:

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ երկինք ի՛նչ այդ խօսքերն, որ ինձ ըսաւ, նըշանակեն.
Յուզուեցա՛ւ արդեօք իւր սիրտն ու խօսքերուս համոզուեցա՛ւ:
Բարեաւ մնա՛ Աթենոյոր:

ԹԵՈՂՈՐ

Բարեա՛ւ Տերամք ով Արմայիս:

ՏԵՍԻՒԼ Ե.

ԹԵՈՂՈՐ (Վառ)

Ո՛վ Աստուած, Աստուած բարի, խնայէ ինձի այս բաժակներն
Որ քան մահ շատ աւելի և ծանրը են ինձի համար.
Սակայն... ո՛չ... սիրով կ'ուզեմ տանիլ ատոնց և տանջուիլ
Ինչպէս զու մեզի համար աշխարհիս վրայ յանձըն առիր
Քու սուրբ կամքդ օրհնեալ ըլլայ. ժամ է ահա պատերազմի:

ՏԵՍԻԼ Զ.

ՎԱՂԱՐՇ ԵՒ ԹԵՈՂՈՐ

ՎԱՂԱՐՇ

Ո՛վ էշխան, Աղուիթա մայրդ զիս քեզ զըրկեց և կը կըրկնէ
Մոռանալ չօր կամ մօր սերն և չըմոռնալ այն սուրբ խոստումն
Զոր արևիբ դու Աստուծոյ արհամարհէ անցատրքս
Հաստատուն կեցիր ցըվեըջ սուրբ հաւատոց յուսոյն վըրայ:

ԹԵՈՂՈՐ

Վաղարշ գնա՛, իմ սիրելի և պաշտելի մօրս ըսէ
Որ պիտի ցուցընեն՞ ես իւր արժանի զաւակն ըլլալս
Եթէ հոս մութ բանտիս մէջ դու կը տեսնես իմ արցունքներս
Զեն արցունք արկարուծեան այլ երախտեաց և սուրբ սիրոյ.
Եւ եթէ չարժանանամ իւր համբուրին վերջին ժամուս
Օրհնէ՛ թող զիս ի հեռուստ, սիրտըս իրեն հետ է ցըվեըջ
Ես երթամ առ Արարիչն աղերսարկու մեր սիրելեաց:

ՎԱՂԱՐՇ

Հայրըդ ևս ինձ աղաչեց գըեզ համողել ինքը չեկած
Որ զոհես տաճարին մէջ ամբոխն այսպէս կը հանդարտի,
Ու ինքըն ևս կ'ազատի մեր արքային բարկութենէն:
Սակայն դու գիտես ընտրել ճըշմարտութեան ուղիդ համբան.
Ահա հայրդ կուգայ արդէն, հետն է զարձեալ Վահրամ իշխան:

ՏԵՍԻԼ Է

ՍՈՒՐԷՆ, ԹԵՈՂՈՐ, ՎԱՀՐԱՄ

ՍՈՒՐԷՆ

Եկուր բովս անուշ զաւակս որ շըղթաներըդ ես քակեմ
Զես գիտեր դու չօր մը ցաւն, միակ զաւակն հոս տեսնելով
Քու մէկ խօսք քու մէկ գործդ ամենայն ինչ կըրնայ ջընջել
Եւ իմ սգոյ սև օրերը կըրկին դարձնել ուրախութեան.
Ե՛կ զաւակս, ե՛կ իմ անուշս, մի՛ թըշուառ չօր մը զըլանար
Որ արցունքն աչքերուն մէջ կը խընդրէ զայս միակ զաւակն.
Ըսէ՛ ինձ կը սիրեն՞ս հայրդ ինչպէս որ հայրդ ըզըեզ սիրէ:

ԹԵՈՂՈՐ

Զեմ կարող հայր իմ ըսել ո՛րքան ըզըեզ կը սիրեմ ես
Քեզ համար պատրաստ արեւնս իսկ թափելու սիրայօժար:

ՍՈՒՐԷՆ

Եկուր գիրկս Աթենդոր, ո՛հ, դու ի՛նչ քաղցր ինձ խօսեցար
Թող հայրե՛ք՝ քեզ ըլլայ զոհ, դու մեշտ ապրէ՛ սիրուն զաւակ.
Եկ գիրկըս ես կը մոռնամ որքան ցաւեր դու ինձ արևիբ
Ե՛կ երթանք փութով մեհեան թող հոն տեսնեն ինձ հնազանդիլդ:

ԹԵՈՂՈՐ

Սահայն հայր, բաց ի քեզմէ ունիմ ուրիշ հայր գերազոյն
Որ երկրի և երկրներ բոլոր մարտոց է միայն հայր
Եւ որուն չընազանդել ամենքնիս ալ պարտական ենք:

ՍՈՒՐԵՆ

Թող ատոնք, չար են անոնք որ ատին բու միտքը գեղմէ.
Մըտածէ որ բու բարիքէ հայր մը միայն անկեղծ դիտէ:

ԹԵՈՂՈՐ

Կը ցանկայի այդ բարիքն ես ինքն ազդել հօրըս սրբոին:

ՍՈՒՐԵՆ

Ուրեմն դու ա՛յնչափ մեծցար որ բու հօրդ ալ կ'ուսուցանես:

ԹԵՈՂՈՐ

Չայդ խօսողն չեմ ես տրկարս. Աստուած է որ կը խօսի յիս:

ՍՈՒՐԵՆ

Ո՛վ տըղայ թող այդ խօսքերն, անմիտ անհամ բարբաջանքներ.
Չաւակս ես, այո՛ գիտես որ կը սիրեմ ըզքեզ անչափ.
Բայց քու հօրդ սէզ սըրտին մէջ, դաւելի սէրէն կայ աւելին՝
Արքային և աստուածոց պատիւը վեր է քան այդ սէր.
Գիտցեր դու որ սէրս յանկարծ անդուժ ցատման կըրնայ փոխուել:

ԹԵՈՂՈՐ

Ո՛վ հայր իմ ներէ՛ ինծի, չեմ ուզեր զքեզ բարկացընել:

ՍՈՒՐԵՆ

Ըսէ՛ ինձ կը հրամայեմ, կը թողո՞ւս դու այն պիղծ աղանդ
Եւ կուգա՞ս ինձ միաբան դուհել տաճարն բազնոյն վերայ:

ԹԵՈՂՈՐ

Ո՛վ հայր իմ, քրիստոնեայ եմ:

ՍՈՒՐԵՆ

Վըկայ աստուածք, ես ա՛լ չեմ հայր
Սըրտիս մէջ ալ չեն խօսիր հայրենական ոչ սէր ոչ դուժ.
Կորսընէ՛ նաև բանաէս քանի որ հոս չընալըն իսկ
Քեզ պարծանք ու փառք կարծես, կորի՛ր տընէս չըւսուական:

ԹԵՈՂՈՐ

Ո՛վ հայր իմ:

ՎԱՀՐԱՄ

Թէ քու հայրդ է լըսէ՛ իրեն:

ԹԵՈԴՈՐ

Ախրով թէ էր կարելի:


ՍՈՒՐԵՆ

Տարեք աչքէս այդ չար դաւակն .

Բայց եթէ արև չմտած յամառի նա չըննազանդիլ
Օ՛ն և օն ես ա՛լ հայր չեմ այլ դահիճ եմ անազորոյն
Մարաւի իրեն արեան, զոր ես ինքնին սըւի իրեն:

Վ Ե Ր Ջ

Գ . Հ Ա Ն Դ Ի Ս Ի



ՀԱՆԴԷՍ Գ .

ՏԵՍԻԼ Ա .

ԹԵՈԴՈՐ (Վ՛այնա՛լ)

Հոս եմ արդ... ամեն անգամ որ այս ձորակը կը դիմեմ
Կարծես միտքս կ'արծարծի նոր ոյժ նոր խանդ մը կը զգենում:
Յողնած եմ յաշխարհայնոց ու հանգըստի կը կարօտիմ.
Նըստիմ հոս քարերուն վրայ. այս հովանիք և այս ծառեր
Չիս առ ժամս կը խաղաղեն և իմ մարմնոյս բուն կը բերեն.
Քո՛ւն անուշ որ վայրկեան մը կուտայ մոռցնել ամէն ցաւեր:
Ո՛ւր էր թէ բընանայի և բնաւ այլ ևս չարթըննայի
Այս վըշտաց և արտասուաց ինձ դառնալից կեանքին համար:
Ուրիշ տեղ և հայրենիք աչքերս ըստէս կը փընտրեն
Լըյսը մուծ է ինձ համար ամենայն ինչ լուռ և տըխուր
Ե՛րբ ըլլայ այն հեշտ վայրկեանն որ իմ հողիս մարմնէս խըղուած
Դիմէ մեծ ուրախութեամբ վայրկեալու իւր Սըտրիչն...
Ո՛վ մայր իմ մայր սիրելի դու իմ սըրտիս միակ գիտակ
Խընդացիք որ բու որդիդ գիտցաւ պահել իւր սուրբ հաւատքն...
Բայց մարմինս կը նըւազի և իմ աչքերս կը մըթափնին.
Հանդիմ հոս քարերուն վրայ իբրև սեղան նըւիրական:

ՏԵՍԻԼ Բ

ԴԱՍԻԿ ԵՒ ԲՈՐՈՏՔ

ՊԱՐՆ

Ինչո՞ւ արդեօք Տէր արդար
 Ծառայքդ ըլլան արհամարհ,
 Լեռներ ձորեր խոտոչներ
 Մխայն քեզի են տաճար:

ՈՄՆ

Տըղայ անմեղ շնորհալիր
 Հովախ շուշան սուրբ ծաղիկ,
 Քու սեղանիդ նախընծայ
 Անմեղութեան ըզզեստով:

ԱՅԼ ՈՄՆ

Իհար անգամ քեզ երանի
 Հեղուկ անմեղ աղանի.
 Որ թեւերովդ փութաւրաց
 Թըռչիս երկինք առ Աստուած:

ՊԱՐՆ

Ինչո՞ւ արդեօք Տէր արդար
 Ծառայքդ ըլլան արհամարհ,
 Լեռներ ձորեր խոտոչներ
 Մխայն քեզի են տաճար:

ՏԵՍԻԼ Գ

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ

Ինչ է ձայնս երգողներու, չըւսականք ինչ կ'ընէք հոս.
 Թէ իմ սուրս նըւերական ձեր արխնէն չըպըզըւէք
 Հիմայ հոս ձեր զըլուխներն այս զազիր հողն կը պազնէին:
 Դուք էիք ո՛վ անօրէնք որ իմ միակ զաւակիս սիրտն
 Գողացար աստուածներէն մուրրցուցիք կորսընցուցիք.
 Սպասեցէք շուտով կուգայ նաև ձեր ալ ժամանակը
 Բայց հիմայ ըսէք ինձի ո՞ւր պահած էք զԱթենուդոր:

ԴԱՍԻԿ

Թէօդո՞ր:

ՍՈՒՐԷՆ

Եւ ո՞վ անոր անուն փոխեց Թէօդորի:

ԴԱՍԻԿ

Երկընթէն իջած շընորհք զոր ըստացաւ քրիստոնէութեամբ:

ՍՈՒՐԷՆ

Պի՛ղձ բորոտք:

ԴԱՍԻԿ

Քեզ համար. իսկ Աստուծոյ համար եմք սուրբ:

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ է այդ քու Աստուածդ այն որ ծանրը վերքերու տակ
Արդ հողին փրչած է նա Արտաշատու վերսպին մէջ:
Իսկ դուք, դուք անօրէնք, սակաւ մի ալ ըստասեցէք
Թող մէկ մը սուրս սրբութի ազնիւ արեամբ, ապա ձեզ ալ... (ԳՆԿ)

ՏԵՍԻԼ Դ.

ԲՈՐՈՏՔ ԵՒ ԱՐՄԱՅԻՍ

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ բորտը ձեզմէ դարչիմ, բայց կ'աղաչեմ ըսէք փութով
Տեսմք դուք զԱթենոզոր քիչ մը առաջ...

ԴԱՍԻԿ

Տակաւին ո՛չ:

ԱՐՄԱՅԻՍ

Իսկ Սուրէն անոր հայրն:

ԴԱՍԻԿ

Ըզթէոզոր կը փրնորուէր:

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ աստուածք պահպանեցէք... վազեմ փութով...

ԴԱՍԻԿ

Մենք ալ դիմենք

Որ միտքան վրկայութեան թերևս անունը սուրբ պըսակն: (ԳՆԿ)

ՏԵՍԻԼ Ե

ԹՆՈԴՈՐ (ՅԵՐԵՄԻ) ԿՆՆԷ

ՍՈՒՐԷՆ

Ահա նա... փրնորածս կեցեր է հոս, ո՛չ ի՛նչ կրես...
Կը նընջէ այնպէս անմեղ ինչպէս կրքեմ զբրկացըս մէջ...
Արդեօք բնաւ անմեղութիւն ունի՞ տարբեր մի կերպարանք...
Եւ ի՛նչպէս հօր մը սիրտը կըրնայ մընալ հոս անըզայ...
Սակայն ոչ... կարևոր է որ հնազանդի ե խոստանայ
Աստուածոց երկըրպագել անոնց բազնին վըրայ զո՛հել,
Եթէ ո՛չ... ո՛չ կը զողամ, ինչո՞ւ ոսկերքս կը սառալին
Քիչ մ'առաջ կըրակ էի ամբողջ մարմնովըս կ'այրէի
Հիմա ցուրտ արձան մըն եմ... ձեռքերս անգամ ա՛լ չեն բըռներ (կը
ՅՔԵ ԿՆՆԷ)

Չեմ տեսներ բընաւ զոք հոս... Ինչո՞ւ արդեօք եկայ հոստեղ...
 Ո՛վ խորհուրդ գազանային... ուրիշներն ալ իմացան զայն.
 Կ'ամաչեմ... գետին կ'անցնիմ... ըսպանանել իմ դաւակըս
 Թող բացուին երկրի անդունդը և թող կըլլեն զիս ճիւղըս
 Թող նդովին բոլոր հայրերն և անիծեն բոլոր աստուածք,
 Աստուածք... բայց ես անոնց պատւոյն համար եկեր եմ հոս,
 Եղկելին իւր խօսքերով զանոնք ամենը նախասաց:
 Թե ազրի այդ իմ զաւակն ո՞ւր ես պէտք եմ ապաւինիլ
 Աստուածոց բարկութենէն և արքային վըրէմներէն: (Կ'առնուս սարք),
 Ո՛վ զաշոյն դու եղի՛ր վկայ, աստուածներն են որ զիս մըշեն
 Թող ինքը, իւր բերանովն ընտրէ ապրիլ կամ մեռանել...
 Աթենուզո՛ր, Աթենուզո՛ր...

ԹԵՈԳՈՐ

Հայր իմ ինչո՞ւ դու հոս ես, հայր:

ՍՈՒՐԵՆ

Էյ՛ր հայր, բայց ալ չեմ հայր... ըսէ ինծի ո՞վ անըզգամ
 Կը պաշտէս աստուածները կուգաս ինծի հետ զոհելու:

ԹԵՈԳՈՐ

Ո՛վ հայր իմ քրիստոնեայ եմ

ՍՈՒՐԵՆ

Ու արդ եղի՛ր քըրխօտոնեայ (Կը շուրէ՛տ սր՛վ
 Թող աստուածք ալ կըշտանան... ասկէ վերջը կորի՛ր պիղծ սուր...
 Ո՞ւր երթամ... ո՞ւր բընակիմ աշխարհիս վրայ առանց զաւկի...
 Ա՛լ որո՞ւն համար ապրիմ... Ի՞նչ ես ըսեմ անոր մօրը
 Ո՛վ զաւակս... Աթենուզո՛ր... Աթենուզո՛ր... մեռա՛ր արդեօք (Կը
 քրի՛տ քը-քը)
 Խօսք մ'ըսէ... մեռա՛ւ... մեռա՛ւ... այ անիծեա՛լ ըլլաք ով զէք: (Կը
 քը-քը)

ՏԵՍԻԼ Զ

ԱՐՄԱՅԻՍ ապա ԲՈՐՈՏՔ

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ տեսիլ... գազան Սուրեն, Աթենուզո՛ր ով սիրելիս
 Ի՞նչպէս ալ լոյսը վայլեմ առանց քեզի ո՛վ բարեկամ:

ԳԱՍԻԿ

Քրիստոսի դուք հեռեողք Երկինք թըռաւ սուրբ Թեոդօր
 Ամենուն ալ բարեխօս մեզ Փըրկողին Աթոռոյն քով:

ԱՐՄԱՅԻՍ

Դուք ծառայք սուրբ Աստուծայն զոր կը պաշտէր Աթենուզօր
 Ահա ես իրեն արեամբն կ'ըլլամ հոստեղ քըրխօտոնեայ:

ԴԱՍԻԿ

Ո՛վ մեծ հրաշք ո՛վ մեծ շնորհք զոր կը գործէ սուրբ մարտիրոսն
 Առաջին շու ես պըտուղ: Յայց արէն իսկ ես կը տեսնեմ
 Գերազոյն այն մեծ շնորհն որ վերապէն Արտաշատու
 Կը ծագէ կ'ելլէ ի վեր արևու նման նըշոյլներով
 Եւ ո՛վ են խումբ խումբ կոյսերն յԱրևմտից հայ հողուն վրայ:
 Կը տեսնեմ շիմացս անա թագապըտակ իշխանք արքայք
 Խոնարհած հողի հաւատար Երկըրպագել այդ մեծ լուսոյն...
 Իսկ ըլբեշ, Որդեակ սիրուն, թէ յանդըգնիմ կոշիկ այսպէս
 Ըզբեղ սուրբ Մարտիրոսը, արեամբ ներկուած Փըրկչին նըման
 Զըբեղ կ'անունը մեկ բարեխօս որբ մընացողքս Երկրիս վըրայ:

ՊԱՐՆ

Ո՛վ Տէր Երկնից ընդունէ՛
 Սուրբ վըկային պաշտանքն
 Անոր արեւնն բուսցընէ՛
 Քեզ բիւրուց բիւր հեռեողք:


ԱՐՄԱՅԻՍ


Ազնիւ բուսոց Դու ծաղիկ
 Թէոզոր սուրբ իշխանիկ
 Ատուածային յարկերէն
 Նայէ մանկանցս այս խըմբին.
 Հովախս ցաւոց Դու շուշան
 Գունով դեղովդ աննըման



Քու սուրբ սիրով զմեզ վառէ
 Քու դասակիդ մէջ խոտնէ՛:
 Փառք պարծանաց Հայ Ազգես,
 Ամփոք թըղայ հասակիս
 Անունդ ըլլայ միշտ յուրբոր
 Սալհունեաց սուրբ Թէոզոր:

ՎԵՐՁ





« Ազգային գրադարան



NL0358536

46.667

891.99

Σ-97